ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՒԿԱՍ ՎԻՐԱԲԻ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Միքայել Վարազդատի Միքայելյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր
Ռուբեն Արմենի Հայրապետյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վաչե Բագրատի Տերտերյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է՝ 2017թ-ի մայիսի 11-ին, ժամը 14^{00}-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ-ի ապրիլի 11-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է սոցիալ-տնտեսական հարաբերությունների բավականին բարդ ժամանակաշրջանում, որին բնորոշ էր պետության կառավարման հետ կապված մի շարք խնդիրներ: Այդ հանգամանքն իր ազդեցությունն է թողել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունների վրա՝ ՏԻՄ-երի համար առաջացնելով ինչպես բյուջետային, այնպես էլ վարչական կախվածություն պետական իշխանություններից: Հատկանշական է, որ այդ խնդիրներն արտահայտվում են հատկապես վարչատարածքային բաժանման գործող համակարգի պայմաններում:

Բազմաթիվ ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ վարչատարածքային բաժանման խնդիրները չեն վերաբերում միայն համայնքներին, այլև ներառում են նաև մարզերին: Հետևաբար, միջհամայնքային համագործակցությունը՝ որպես վարչատարածքային բարեփոխումների ձև, նպատակահարմար չէ սահմանափակել միայն համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման գործընթացներով՝ հատկապես եթե դրանք հիմնավորվում են գլխավորապես վարչական ծախսերի կրճատմամբ: Այսինքն բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է ներդնել այնպիսի սկզբունքներ, որոնք կապահովեն ոչ միայն տնտեսական արդյունավետություն, այլև կբարելավեն կառավարման որակը և կմեծացնեն համագործակցության շրջանակները՝ նպաստելով տարածքային համաչափ զարգացմանը: Միջազգային պրակտիկայում տարածքային զարգացման (regional development) նպատակով կիրառվում են տարածական զարգացման (spatial development) մեթոդներ, որոնց հիմնական առանձնահատկությունն այն է, որ կառավարման սուբյեկտների միջև ձևավորվում է այնպիսի համագործակցություն, որի շրջանակներում՝ ի տարբերություն տարածքային զարգացման, չեն դիտարկվում վարչական սահմանները: Սույն ատենախոսության շրջանակներում կարևորվել է համայնքների միջև հարաբերությունների ձևավորման այնպիսի համակարգերը, որոնք ներառում են տարածական զարգացման սկզբունքները և իրենց ծրագրերում չեն դիտարկում համայնքների ու մարզերի վարչական սահմանները: ՀՀ իրավական ակտերում և այլ մասնագիտական ոլորտներում տարածական զարգացման սկզբունքները բավարար չափով ուսումնասիրված չեն:

Միջհամայնքային համագործակցության ոլորտում կարևոր ուղղություն կարող է հանդիսանալ նաև տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը: Չնայած ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտում որոշակի աշխատանքներ են իրականացվել էլեկտրոնային կառավարման տեսանկյունից, այնուամենայնիվ համայնքների միջև ձևավորվող հարաբերությունների նոր համակարգի պայմաններում անհրաժեշտ է դիտարկել ցանցային կառավարման այնպիսի սկզբունքներ, որոնք կբարձրացնեն միջհամայնքային համագործակցության արդյունավետության մակարդակը՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառմամբ: Այդ գործոնները ՀՀ կառավարության ծրագրերով նախատեսված համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման գործընթացների մեջ բավարար չափով ներկայացված չեն:

Վերոնշյալ հանգամանքների առկայությունը անհրաժեշտություն է դարձնում միջհամայնքային համագործակցության նոր սկզբունքների ու մեխանիզմների ներդրման հրատապությունը, որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում տեղական ինքնակառավարման զարգացման առումով միջհամայնքային համագործակցության հնարավորությունների հետազոտումն է: Այս նպատակի իրականացման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները և միջհամայնքային համագործակցության զարգացման տեսական, մեթոդական ու իրավական հիմքերը,
- վերլուծել միջհամայնքային համագործակցության ոլորտում առկա միջազգային փորձն ու դրա արդյունքերը մեր հանրապետությունում տեղայնացնելու հնարավորությունները,
- իրականացնել համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման նախադրայլների և առկա իրավական դաշտի համալիր հետազոտություն,
- հիմնավորել տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման նպատակով միջհամայնքային համագործակցության ոլորտում կառավարման նոր սկզբունքների ու մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը և հնարավորությունները,
- ուսումնասիրել միջհամայնքային համագործակցության հնարավորությունները՝ տարբեր մարզերի վարչատարածքային սահմաններում գտնվող տեղական ինքնակառավարման մարմինների համար,

- մշակել տեղական ինքնակառավարման լիազորությունների վերաբաշխման միջոցով միջհամայնքային համագործակցության ներդրման ու զարգացման մեթոդաբանություն,
- ներկայացնել միջհամայնքային համագործակցության շրջանակներում կլաստերային նախաձեռնությունների իրագործման ծրագրային մոտեցումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Հետազոտության օբյեկտը տեղական ինքնակառավարման համակարգն է՝ միջհամայնքային համագործակցության շրջանակներում:

Հետազոտության առարկան է տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման տեսանկյունից միջհամայնքային համագործակցության մեթոդների, մոտեցումների ու մեխանիզմների ներգործության ուսումնասիրությունը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը.

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել տեղական ինքնակառավարման և միջհամայնքային համագործակցության ոլորտում առկա վերլուծությունների, հետազոտությունների, ուսումնասիրությունների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, գիտական հրապարակումները, վիճակագրական տվյալները, իրավական ակտերը: Հետազոտության մեջ կիրառվել են դինամիկ շարքերի, վիճակագրական, գործոնային և համեմատական վերլուծությունների մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը և արդյունքը. Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթն առնչվում է միջհամայնքային համագործակցության միջոցով ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում ուղիների նախանշմանը: Հետազոտության շրջանակներում ստացված հիմնական գիտական նորույթից բխող դրույթներն ամփոփված են հետևյալ կետերում.

- Հիմնավորվել է միջհամայնքային համագործակցության մեջ այնպիսի սկզբունքների ներդրման անհրաժեշտությունը, որոնց դեպքում կարևորվում է ոչ թե համայնքների խոշորացումը, այլ համայնքների տնտեսական զարգացման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների մի շարք լիազորությունների միավորմամբ համայնքային նպատակային միավորումների ստեղծումը:
- Մշակվել է միջհամայնքային միավորման ծախսային պահանջմունքների գնահատման մեթոդ ըստ հանրային ծառայությունների մատուցման նվազագույն

ծախսերի, որի կիրառմամբ հնարավոր է հաշվարկել միջհամայնքային միավորման կողմից մատուցվող հանրային ծառայությունների համար անհրաժեշտ նվազագույն ծախսեր, բարելավել պետական բյուջեից ՏԻՄ բյուջեներին դոտացիաների տրամադրման գործընթացը, ինչպես նաև՝ գնահատել միջհամայնքային համագործակցության հաստատման նպատակահարմարությունը:

• Հիմնավորվել է միջհամայնքային համագործակցության այնպիսի մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում պետք է անտեսել համայնքների կամ մարզերի վարչատարածքային խնդրահարույց բաժանման առանձնահատկությունները և համագործակցության հիմքում դնել կլաստերային տնտեսությունների զարգացման հնարավորությունները: Ներկայացվել են միջհամայնքային համագործակցության և տարածական կլաստերային նախաձեռնությունների մշակման ու իրագործման ծրագրային մոտեցումներ, հստակեցվել են այդ գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով միջհամայնքային միավորումներին վերապահվելիք գործառույթները:

• Առաջարկվել է ներդնել միջհամայնքային համագործակցության այնպիսի տարրեր, որոնք հիմնված են ցանցային կառավարման սկզբունքների վրա և կարող են իրականացվել տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառմամբ՝ համագործակցության մեջ գտնվող համայնքներին վերաբերող տեղեկատվական ամբողջ բազայի թվայնացման միջոցով:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների, վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, մարզպետարանների, ՏԻՄ-երի և այլ կառույցների կողմից՝ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի բարելավման, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության մշակման և իրագործման, տեղական ինքակառավարման մարմինների լիազորությունների իրականացման, համայնքների խոշորացման ու միջհամայնքային միավորումների ստեղծման նպատակով տնտեսական և իրավական դաշտի բարելավման, միջհամայնքային համագործակցության զարգացման հայեցակարգային հիմնադրույթների մշակման խնդիրների լուծման նպատակով:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները. Ատենախոսության որոշ դրույթներ արտացոլված են 6 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 129 էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը: Ատենախոսությունը պարունակում է 8 աղյուսակ և 5 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը, գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ <<*Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում. խնդիրներն ու զարգացման ներուժային հնարավորությունները*>> գլխում հետազոտվել են ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման առանձնահատկությունները, գործունեության հիմնական արդյունքները, ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև միջհամայնքային համագործակցությունը տեղական ինքնակառավարման խնդիրների լուծման տեսանկյունից:

Հայաստանում քաղաքական և ֆիսկալ ապակենտրոնացման իրավական հիմքերը դրվեցին 1995թ. Սահմանադրության ընդունմամբ, որտեղ մասնավորապես, ամրագրվեց տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ ունենալու իրենց կողմից մշակվող, հաստատվող, կատարվող և վերահսկվող համայնքային բյուջե, ինչպես նաև օրենքին համապատասխան սահմանել տեղական տուրքեր և վճարներ: Հետագայում համայնքներն իրենց կողմից տնօրինվող վարչական և ֆոնդային բյուջեների օգտագործմամբ ցույց տվեցին, որ այդ բյուջեները գործուն չեն: Ըստ էության վարչական բյուջեի ծախսերը վերաբերում են համակարգի պահպանմանը և առաջնահերթ գործառույթների իրականացմանը:

Ինչ վերաբերում է բյուջեի ֆոնդային մասին, ապա այն ունի առավելապես տնտեսական նշանակություն և ապահովում է կապիտալ բնույթի ծախսեր: Դա նշանակում է, որ համայնքի ֆոնդային բյուջեն ունի առանձնահատուկ նշանակություն սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից: Իսկ մեր հանրապետությունում համայնքների վարչական և ֆոնդային բյուջեների հարաբերակցությունը հօգուտ վարչական բյուջեի է (ֆոնդային բյուջեի տեսակարար կշիռը տատանվում է 5%-ի շրջանակներում)[1], որը նշանակում է, որ տեղական ինքնակառավարման գործող համակարգը հիմնականում իրականացնում է ինքնապահպանման, այլ ոչ թե զարգացման գործունեություն: Իսկ ընդհանուր առմամբ ՀՀ համայնքների բյուջեներն ունեն բավականին համեստ ցուցանիշներ:

---

[1] Թումանյան Դ. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011) գիրք 5, Երևան, Նոյան տապան 2012, էջ 24, 178 էջ

2015թ. ՀՀ համայնքների բյուջեի եկամուտները կազմել են 128.2 մլրդ դրամ, ինչը կազմել է ՀՆԱ 2.5%-ը և ՀՀ համախմբված բյուջեի 10.6%-ը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ համայնքների բյուջեի եկամուտները, 2006-2015թթ.[2]

	2006	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդամենը եկամուտներ, մլրդ դրամ	39.1	48.3	52.6	84.9	87.3	95.5	105.8	114.3	128.2
ՀՆԱ նկատմամբ, %	1,5	1,4	1,7	2,4	2,3	2,4	2,5	2.3	2.5
Համախմբ-ված բյուջեի եկամուտների նկատմամբ, %	7,3	6,0	7,4	10,6	9,6	9,8	9,6	9,7	10,6

2006-2015թթ. ընթացքում համայնքների բյուջեի եկամուտներն ընդամենը երկու անգամ՝ 2010 և 2015թ-ին են գերազանցել համախմբված բյուջեի եկամուտների 10 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ մի շարք եվրոպական երկրներում ՏԻՄ բյուջեների եկամուտները կազմում են համախմբված բյուջեի եկամուտների միջինում 25-40%:

ՀՀ-ում համայնքների բյուջեի եկամուտների ապահովման կարևորագույն աղբյուր են հանդիսանում պաշտոնական դրամաշնորհները: Այդ ցուցանիշի գծով համայնքների բյուջեի եկամուտները տատանվել են 50%-ի շրջակայքում (տես՝ գծանկար 1): Դա նշանակում է մեծ կախվածություն կենտրոնական իշխանության մարմիններից, որը թուլացնելու և սեփական ռեսուրսները համախմբելու կարևորագույն միջոց կարող է հանդիսանալ միջհամայնքային համագործակցությունը:

[2] Աղբյուրը՝ համապատասխան տարիների ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ ԱՎԾ (www.armstat.am)



Գծանկար 1. Համայնքների բյուջեի պաշտոնական դրամաշնորհների բացարձակ և հարաբերական ցուցանիշների դինամիկան[3]

Միջհամայնքային համագործակցության անհրաժեշտությունը տարբեր տեսանկյունից դիտարկելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ 1998-2015թթ. ընթացքում համայնքների բյուջեների ծախսերը ՀՆԱ նկատմամբ 1.2%-ից հասել են 2.5%-ի, իսկ համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքում համայնքնային բյուջեների մասնաբաժինը աճել է 4.9%-ից մինչև 9%-ի: Պետք է նշել, որ համանման ցուցանիշներով բարձր մակարդակ ունեցող երկրներում կայացած է նաև միջհամայնքային համագործակցության տարբեր ձևեր, որի արդյունքում միևնույն միությունների մեջ միավորված են ոչ միայն հանրային, այլև մասնավոր կառույցները:

Այսինքն ՀՀ-ում ՏԻՄ-երը խիստ ցածր մասնակցություն ունեն հանրային ծախսերում: Սա նշանակում է նաև, որ ՏԻՄ-երը սահմանափակ մասնակցություն ունեն հանրային ծառայությունների մատուցման գործընթացում և որ ՀՀ-ում հանրային կառավարման ապակենտրոնացումը բավարար խորության վրա չի գտնվում: Նշված խնդիրներն արդյունք են համայնքների միջև իրականացվող համագործակցության թույլ բնույթի:

Ատենախոսության երկրորդ՝ *<<Միջհամայնքային համագործակցության զարգացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում և միջազգային միտումները>>* գլխում հետազոտվել է ՀՀ միջհամայնքային համագործակցության տնտեսահրավական հիմքերը և վերլուծության է ենթարկվել միջհամայնքային համագործակցության միջազգային փորձը:

ՀՀ-ում համայնքների միջև համագործակցության փորձը բավականին քիչ է, և չնայած գործում են երկու տասնյակից ավել համայնքային միություններ, որոնք ձևավորվել են կամավոր հիմունքներով և ունեն որոշակի պայմանագրային

[3] Կառուցվել է հեղինակի կողմից, ՀՀ ԱՎԾ հրապարակումների տվյալների հիման վրա:

պարտավորություններ միմյանց նկատմամբ (հիմնականում հարկային վարչարարության հետ կապված), այնուամենանիվ՝ այդ պարտավորությունները հիմնականում ձևական են ու չեն իրականացվում: Դրա հիմնական պատճառն այն է, որ պայմանագրային պարտավորությունների չկատարումը տվյալ դեպքում իրավական պատասխանատվություն չի առաջացնում, քանի որ միջհամայնքային համագործակցության ոլորտում բացակայում են պատասխանատվություն պարտադրող իրավական նորմերը:

Միջազգային փորձի վերլուծության համաձայն համայնքների միջև կարող են կնքվել միանպատակ կամ բազմանպատակ համագործակցության պայմանագրեր, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները[4].

- Պայմանագրի արժեքը. պայմանագրի գործողության ընթացքում ինչ ծավալով հանրային ծառայություններ պետք է մատուցվեն և որքան կլինի հասույթը:
- Գործառույթների կառավարման և վերահսկողության արժեք. անհրաժեշտ է հաշվի առնել պայմանագրի կատարման նպատակով իրականացվող բոլոր ծախսերը:
- Ծառայության մատուցման տարածք. յուրաքանչյուր ծառայություն ունի արդյունավետ մատուցման օպտիմալ տարածք, որը պայմանավորված է ոչ միայն գնային, այլև տարածքային գործոններով: Եթե ծառայության՝ որպես ապրանքի ձևավորման մեջ մեծ է կապիտալի կամ մասնագիտական գործոնի դերը, ապա այն կարող է ընդգրկել համեմատաբար մեծ տարածքներ: Իսկ եթե ծառայության մատուցման ընթացքում կարևորվում է ժամանակի գործոնը (օրինակ՝ հրշեջ ծառայությունը), ապա այն արդյունավետ կլինի փոքր տարածքներում:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ միջհամայնքային համագործակցությունն աշխարհի ամենատարբեր երկրներում ՏԻՄ-երի կողմից լայնորեն կիրառվող գործընթացների ամբողջություն է, որի շրջանակներում համայնքները միավորվում են որոշակի գործառույթներ կամ ծրագրեր՝ առավել արդյունավետ ձևով իրականացնելու շուրջ:

Անկախ այն հանգամանքից, թե միջհամայնքային համագործակցությունը կազմակերպական ինչ ձևով կամ ինտեգրացիայի ինչ աստիճանով է իրականացվում, բոլոր դեպքերում ձևավորվում է ցանցային համակարգ, որը տնտեսության կառավարման տեսանկյունից կարող է լինել բավականին արդյունավետ:

---

[4] Hulst, R., and Van Montfort, A. (2007). Inter-Municipal Cooperation in Europe (pp. 211-238). Dordrecht: Springer. 2007

Ատենախոսության երրորդ՝ *<<Միջհամայնքային համագործակցության զարգացման հնարավորությունները և ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում>>* գլխում հետազոտվել է ՀՀ միջհամայնքային համագործակցության զարգացման մեթոդաբանությունը, այդ համագործակցությունը դիտարկվել է համայնքների բյուջետային բարելավման տեսանկյունից, հիմնավորվել է տարածական զարգացումը և ցանցային կառավարումը որպես միջհամայնքային համագործակցության ուղղություն՝ իսկ կլաստերային մոտեցումը որպես տարածական զարգացման գործիք:

Հետազոտության շրջանակներում առաջարկում ենք ներդնել միջհամայնքային համագործակցության այնպիսի մոդելներ, որոնց կենսագործմամբ ոչ թե համայնքներն ամբողջությամբ կմիավորվեն և կկորցնեն իրենց ինքնիշխանությունը, այլ կձևավորեն միավորումներ՝ առանձին նպատակային ծրագրերի իրականացման համար:

1-ին փուլ Պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ծավալները համայնքների կտրվածքով պետք է ասիճանաբար նվազեցվեն, իսկ դրանց փոխարեն ավելացվեն նպատակային սուբվենցիաների ծավալները՝ տրամադրելով քիչ ծախսումներ պահանջող և բնակչության առավել լայն զանգվածներ ընդգրկող տարածքներին՝ միջհամայնքային միավորումներին:

2-րդ փուլ Նպատակային սուբվենցիաների տրամադրման գործիքի կիրառմամբ միջհամայնքային միավորումներ կարող են ձևավորվել տեղական ինքնակառավարման մարմինների ընդամենը մի քանի լիազորությունների միավորման շուրջ և համայնքները, հրաժարվելով որոշ լիազորություններից, դեռևս կունենան անկախության բարձր աստիճան, իսկ միջհամայնքային միավորումները կլինեն պարզապես որոշակի ծրագրեր և գործառույթներ իրականացնող մարմիններ:

3-րդ փուլ Միջհամայնքային միավորումների ձևավորման և գործունեության ուժեղացման նպատակով կարելի է համայնքների տրամադրության տակ թողնել միայն վարչական բյուջեն, իսկ ֆոնդային բյուջեները կենտրոնացնել միջհամայնքային միավորման համակարգում:

4-րդ փուլ Ծախս-արդյունք համադրումը համայնքային և միջհամայնքային միավորումների բյուջեների միջև, ինչպես նաև ֆոնդային բյուջեների տրամադրումը միջհամայնքային միավորմանը ցույց կտա արդյունավետության բարձր ցուցանիշներ ի օգուտ միջհամայնքային միավորումների բյուջեներից կատարվող ծախսերի:

5-րդ փուլ Աստիճանաբար կուժեղանան միջհամայնքային միավորումները և դրան զուգահեռ՝ կնվազի միավորման անդամ ՏԻՄ-երի դերը՝ համայնքային

ծառայությունների մատուցման ոլորտում: Ըստ էության աստիճանաբար կձևավորվի տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակ ի դեմս միջհամայնքային միավորումների:

Միջհամայնքային համագործակցության ցանկացած ձևի դեպքում, որի արդյունքում կվերաբաշխվեն լիազորություններ, անհրաժեշտություն է առաջանալու ներդնել տեղական ինքնակառավարման միավորման կողմից իրականացվող ծախսային նոր քաղաքականություն: Դրա արդյունքում կառաջանան ծախսային որոշակի նորմատիվներ, որոնց հաշվարկման համար աշխատանքի մեջ առաջարկվել է նոր մոդել:

Միջհամայնքային համագործակցության կարևոր ուղղություն կարող է հանդիսանալ տարածական զարգացումը, որի հիմքում դրվում է որոշակի տարածքի՝ անկախ վարչական սահմաններից, սուբյեկտների միջև համագործակցության սկզբունքը: Եթե այդ սուբյեկտները տնօրինում են այնպիսի ռեսուրսների, որոնք ապահովում են համագործակցության լայն դաշտ, ապա դա միանշանակ կերպով կնպաստի տվյալ տարածքի զարգացմանը: Մեր հանրապետությունում կարող են լինել տարբեր մարզերի վարչական սահմաններում գտնվող համայնքներ, որոնք կունենան այնպիսի ռեսուրսներ ու զարգացման հնարավորություններ, որ համադրելի են միմյանց ու կարող են ապահովել սոցիալ-տնտեսական զարգացման ավելի մեծ արդյունավետություն, քան իրենց մարզի համայնքների հետ համագործակցության պարագայում: Տարածական զարգացման սկզբունքներով միջհամայնքային համագործակցության մոդելի կիրառմամբ հնարավոր կլինի խուսափել համայնքների խոշորացման ծախսատար և ռիսկային գործընթացից, ինչպես նաև՝ վարչատարածքային բարեփոխումների հիմքում դնել ոչ թե համայնքների վարչական ծախսերի կրճատման, այլ նրանց տնտեսական զարգացման գաղափարը: Հետևաբար, անհրաժեշտ է ներդնել միջհամայնքային համագործակցության ընդլայնման և կառավարման նոր մեխանիզմ, որի շրջանակներում կձևավորվի նաև տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների նոր համակարգ՝ ցանցային կառավարման սկզբունքների վրա հիմնված միջհամայնքային համագործակցության ստեղծում:

Ցանցային կառավարման համակարգերի վերաբերյալ տեսություններին առնչվող հիմնական վերլուծությունները հանգում են նրան, որ դրանց ներդրմանը զուգահեռ նվազում է պետական կառավարման համակարգի դերը, դրա փոխարեն մեծանում է ինքնակազմակերպվող կառույցների նշանակությունը[5]:

---

[5] Սարգսյան Տ. <<Պետության վախճանը (կամ հասարակության կազմակերպման նոր ձևը)>>, Երևան 2008, էջ 14:

Տարբեր համայնքների տեղական հարկերի և տուրքերի, բնակչությանը տրամադրվող տեղեկանքների, գրանցման ու հաշվառման, հողերի, բնակարանային, կոմունալ-կենցաղային և այլ ոլորտների վերաբերյալ տեղեկատվության կենտրոնացումը և ցանցային համակարգի միջոցով դրանց հետ կապված գործողությունների իրականացումը էականորեն կարող է մեծացնել տեղական ինքնակառավարման ոլորտում այդ աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունավետությունը: Այդ գործընթացները կազմակերպելու համար պարտադիր չէ իրականացնել համայնքների խոշորացում և միջհամայնքային նոր հարաբերությունների ներդրումը կարող է ապահովել նշված գործառույթների իրականացումը: Տարբեր համայնքների միջև ձևավորվող ցանցային համակարգը կարող է ծառայել որպես միջհամայնքային համագործակցության զարգացման կարևոր պայման, որի միջոցով տարածական զարգացման ծրագրերի իրականացումը կդառնա ավելի իրատեսական և արդյունավետ: Տարածական զարգացման արդյունավետ քաղաքականության միջոց կարող է հանդիսանալ նաև այնպիսի համագործակցությունը, որի հիմքում դրված է կլաստերային մոտեցումը: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել որևէ տարածքի կլաստերային ներուժի գնահատում, ինչի վերաբերյալ ատենախոսության մեջ ներկայացված է համապատասխան մեթոդաբանություն: Այս համատեքստում Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համար կարևորվել է այնպիսի միջհամայնքային համագործակցությունը, որի արդյունքում միջհամայնքային միավորումները պետք է իրականացնեն զբոսաշրջային կլաստերային ցանցի առաջնորդի, արդյունավետ կապակցողի գործառույթներ:

Ատենախոսության *<<Եզրակացություններ և առաջարկություններ>>* բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրակացություններն ու առաջարկությունները, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. ՀՀ-ում համայնքներն ունեն ֆինանսական սահմանափակ բազա, որը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն իրականացնել նրանց գործառույթները: Ֆիսկալ ապակենտրոնացման արդյունքում համայնքներին լրացուցիչ գործառույթներով ծանրաբեռնելը նշանակում է մեծացնել նրանց վարչական ծախսերը, որը կարող է հանգեցնել անարդյունավետ տեղական ինքնակառավարման:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ընթացքում ձևավորված տնտեսահիրավական հարաբերությունները, նրանց թույլ կարողությունները և պետական բյուջեի կողմից տրամադրվող բյուջետային

վարկերի ու երաշխիքների համակարգի չօգտագործումը հնարավորություն չեն տալիս համայնքներին ներգրավելու արտաքին ներդրումներ:

3. Համայնքային բյուջեների սեփական եկամուտները կազմում են համայնքների բյուջեի 2/3 մասից փոքր, որը էականորեն նվազեցնում է տեղական ինքնակառավարման անկախությունը: Համայնքային բյուջեների կառուցվածքում բավական բարձր տեսակարար կշիռ ունի վարչական բյուջեների ցուցանիշը, իսկ ֆոնդային բյուջեները, որոնք նախատեսված են կապիտալ ծախսեր իրականացնելու համար, այնքան փոքր են, որ որևէ սոցիալ-տնտեսական զարգացում չեն կարողանում ապահովել: Այս խնդիրը լուծելու առումով կարևորվել է ոչ միայն ծախսերի օպտիմալացումը, այլև կառավարման նոր սկզբունքների ներդրումը:

4. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկման բացակայությունը առաջացրել է մեծ խնդիրներ, որի բարելավման նպատակով ներկայացվել է միջհամայնքային միավորման ծախսային պահանջմունքների գնահատման մեթոդաբանություն: Դրա կիրառմամբ հնարավոր է գնահատել միջհամայնքային միավորումների ձևավորման նպատակահարմարությունը, ինչպես նաև՝ բարձրացնել պետական բյուջերից ՏԻՄ բյուջեներին դոտացիաների տրամադրման գործընթացի նպատակայնությունն ու արդյունավետությունը:

5. Անհրաժեշտ է ներդնել միջհամայնքային այնպիսի համագործակցության մոդելներ, որտեղ ոչ թե համայնքներն ամբողջությամբ կմիավորվեն, այլ կձևավորեն միավորումներ առանձին նպատակային ծրագրերի իրականացման համար: Այսինքն սկզբնական փուլում անհրաժեշտ է համայնքների խոշորացման փոխարեն կիրառել միջհամայնքային միավորումների ստեղծման գործընթացը՝ խրախուսելով միջհամայնքային համագործակցությունը:

6. Միջհամայնքային միավորումների դերի ուժեղացումը ֆոնդային բյուջեների ու նպատակային սուբվենցիաների տրամադրման միջոցով՝ այդ կառույցը կդարձնի տեղական ինքնակառավարման նոր մակարդակ, որն իրականացնում է կապիտալ ծրագրերին վերաբերող գործառույթներ, իսկ այդ միավորման անդամներ մնացած թույլ լիազորություններով համայնքները կհանդիսանան վարչական գործառույթներ իրականացնող սուբյեկտներ: Այս դեպքում անհրաժեշտություն կառաջանա վերանայել տարածքային կառավարման մարմինների գործառույթները՝ մասնավորապես, տնտեսական և կազմակերպչական բնույթի մի շարք գործառույթներ, որոնք առնչվում են, օրինակ, պետության կողմից իրականացվող կապիտալ ներդրումներին կամ որպես պատվիրատու հանդես գալուն, կարող են փոխանցվել տեղական ինքնակառավարման նոր մարմիններին կամ նպատակային միություններին:

7. Տարածական զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է խրախուսել նպատակային միջհամայնքային միավորումների ձևավորման մեխանիզմների կիրառումը՝ տարբեր մարզերում գտնվող համայնքներին օրենդրորեն թույլատրելով միմյանց հետ կազմելու նպատակային միություններ, այդ կառույցներին տրամադրելով բոլոր տիպի սուբսիդիաները և սուբվենցիաները, թույլատրելով գրանցվել որպես իրավաբանական անձ՝ համայնքներից ստանալով տնտեսական բնույթի լիազորությունները: Պետք է խրախուսվեն տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների միավորումը և դրա արդյունքում մի քանի համայնքների կողմից կապիտալ ներդրումների իրականացումը:

8. Անհրաժեշտ է ներդնել միջհամայնքային համագործակցության ընդ-լայնման և կառավարման նոր մեխանիզմ, որի շրջանակներում կձևավորվի նաև տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների նոր համակարգ: Վերջինս ենթադրում է ցանցային կառավարման սկզբունքների վրա հիմնված միջհամայնքային համագործակցության ստեղծում, որի պարագայում առավել արդյունավետ կգործեն տարածական զարգացման ծրագրերը՝ հաշվի չառնելով վարչատարածքային գործող համակարգի և ապակենտրոնացման ոլորտի խնդիրները:

9. Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով ցանցային կառավարումը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում որպես միջհամայնքային համագործակցության զարգացման գործոն ներդնելու համար անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> և <<Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին>> ՀՀ օրենքներում՝ դրանցում ամրագրելով այնպիսի դրույթներ, որոնք տեղական ինքնակառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կդարձնեն պարտադիր, համայնքային ծառայության համակարգում համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրում հստակ կնշեն այն բոլոր չափանիշներն ու չափորոշիչները, որոնց միջոցով կգնահատվի տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներին՝ համայնքային ծառայողի տիրապետման մակարդակը: Անհրաժեշտ է ստեղծել <<Համայնքների տեղեկատվական բազա>>, որտեղ ներկայացված կլինեն բոլոր համայնքների ներդրումային գրավչության վերաբերյալ տվյալներ, այդ թվում տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության վարկանիշային գնահատական:

Տեղեկատվական բազան կարելի է ստեղծել GIS (Geographical Information System) ինտերակտիվ քարտեզագրման գործիքակազմի միջոցով՝

հատկապես արդեն խոշորացված համայնքների համար, որի մեջ կարելի է ներառել հետևյալ տվյալները.

- համայնքի կամ միջհամայնքային միավորման վարչական տարածքում գտնվող հանքեր, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր, անտառներ և այլ բնական ռեսուրսներ,
- աշխատուժ, բնակչության թիվ, գործազրկության մակարդակ, աշխատուժի մասնագիտական կողմնորոշումների առանձնահատկություններ,
- պատմաճարտարապետական հուշարձաններ ու մշակութային առանձնահատկություններ,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարկանիշային միավորներ՝ կառավարման արդյունավետության գնահատական՝ տրված լիազոր մարմնի կողմից: Այդպիսի համակարգ այժմ չի գործում, սակայն ներդրումային գրավչություն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել համապատասխան չափորոշիչներ, որոնցով հնարավոր կլինի ստանալ վարկանիշային միավորներ: Այդ համակարգը հնարավորություն կտա ապահովել համայնքային ռեսուրսների տեղաբաշխվածության առավել ամփոփ նկարագիր, նպաստելով օպտիմալ որոշումների կայացմանը:

10.Տարածական զարգացման խնդիրների լուծման համատեքստում կարևորվում է կլաստերային նախաձեռնությունների վերհանումն ու իրագործումը: Այս գործընթացում լուրջ դերակատարում կարող են ունենալ միջհամայնքային միավորումները, որոնք կարող են իրագործել կոորդինացիոն խնդիրների լուծմանն ուղղված կոնկրետ գործառույթներ:

11. Միջհամայնքային համագործակցությունն ուժեղացնելու և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու նպատակով ներդրվող տարածական զարգացման ծրագրերը չեն ենթադրում վարչատարածքային բաժանման ներկա համակարգի վերանայում: Սակայն, միջհամայնքային համագործակցության ակտիվացումը նպատակ ունի ապահովել ոչ միայն համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը, այլ նաև տեղական մակարդակներում կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը: Բացի այդ, տարածական զարգացման ծրագրերը ենթադրում են համայնքների միջև համագործակցության որակական նոր մոտեցումների կիրառում, ինչը վարչատարածքային գործող համակարգի և ապակենտրոնացման աստիճանի պարագայում լրացուցիչ խնդիրների կբախվի: Հետևաբար, անհրաժեշտ է ներդնել միջհամայնքային համագործակցության ընդլայնման և կառավարման նոր մեխանիզմ, որի շրջանակներում կձևավորվի նաև տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների նոր համակարգ: Վերջինս կարող է ենթադրել ցանցային կառավարման սկզբունքների վրա հիմնված միջհամայնքային համագործակցության ստեղծում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. *Խաչիկյան Ղ. Վ.,* Տեղական ինքնակառավարման առանձնահատկու-թյունները ՀՀ և ԳԴՀ հանրային կառավարման համակարգերում, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա N 8-9, 2008, էջ 67-68, ISSN 1829-0787

2. *Խաչիկյան Ղ. Վ., Խաչիկյան Ս. Վ.,* Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության կազմակերպման առանձնահատկությունները տարբեր երկրներում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում N 3, 2009, էջ 54-61

3. *Խաչիկյան Ղ. Վ.,* Միջհամայնքային համագործակցության զար-գացման միջազգային փորձի ուսումնասիրություն, Մարզերի զարգացման սոցիալ տնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում, գիտաժողովի նյութեր, «Նահապետ» հրատարակչություն, Եղեգնաձոր 2014, էջ 161-164, ISBN 978-9939-856-07-0

4. *Խաչիկյան Ղ. Վ.,* Կլաստերների ձևավորման առանձնահատկու-թյունները միջհամայնքային համագործակցության պայմաններում, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա N 1-2 (173-174) 2015, էջ 60-61, ISSN 1829-0787

5. *Խաչիկյան Ղ. Վ.,* Միջհամայնքային համագործակցության առանձնահատ-կությունները և ՀՀ վարչատարածքային բաժանման հեռանկարները, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա N 11-12 (195-196) 2016, էջ 38-39, ISSN 1829-3689

6. *Խաչիկյան Ղ. Վ., ՀՀ* վարչատարածքային բաժանման հեռանկարները համայնքների խոշորացման համատեքստում, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա N 11-12 (195-196) 2016, էջ 40-41, ISSN 1829-3689

ГУКАС ВИРАБОВИЧ ХАЧИКЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ С ПОМОЩЬЮ МЕЖМУНИЦИПАЛЬНОГО СОТРУДНИЧЕСТВА

Автореферат диссертации на соискание ученной степени кандидата экономических наук по специальности 08.00.02-"Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 11-ого мая 2017 г., в 14^{00} часов на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском Государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандян 128.

РЕЗЮМЕ

Основная цель диссертация это исследование возможностей межмуниципального сотрудничества с ориентацией на развитие местного самоуправления в РА. Для осуществления этой цели в работе указаны следующие проблемы.

- Исследовать особенности местного самоуправления и теоретические, методические и юридические основы развития межмуниципального сотрудничества.
- Анализировать международные тенденции межмуниципального сотрудничества и возможности локализации лучшего опыта в нашей республике.
- Осуществить комплексное исследование факторов формирования укрупнений муниципальных образований и межмуниципальных союзов.
- Обосновивать возможности и необходимость внедрения новых принципов и механизмов управления в сфере межмуниципального сотрудничества с намерением повисить эффективность местного самоуправления.
- Исследовать возможности межмуниципального сотрудничества для органов местного самоуправления разных областей, в разных административных границах.
- Обработать методологию внедрения и развития межмуниципального сотрудничества с помощью перераспределения полномочий местного самоуправления.
- Представить програмные подходы реализации кластерных инициативов в рамках межмуниципального сотрудничества.

Основные итоги диссертация имеют теоретические, методические и прикладные ориентации, научная новизна которых относится предвещению

путей повышения эффективности местного самоуправления с помощью межмуниципального сотрудничества. Полученные в рамках исследования положения из основной новизны представлены в следующих пунктах.

- Была обоснована целесообразность экономического развития, а не необходимость внедрения межмуниципального сотрудничества силой принцип оптимизации затрат, в случае чего значится не укрупнение муниципальных образований, а создание целевых объединений с помощью объединения других различных полномочий.
- Был представлен методологический подход оценки затратных потребностей межрегионального объединения, с применением которого возможно улучшить процесс предоставления дотаций местным бюджетам от государственного бюджета, а так же оценить целесообразность утверждения межмуниципального сотрудничества.
- Была обоснована значимость продвижения межмуниципального сотрудничества, используя принципы пространственного развития, где не будет иметь значение в административных границах какой области будут находится сотрудничающие муниципалитеты. На основе сотрудничества будут базироваться возможности развития кластерных экономик. Кроме того были представлены программные подходы разработки и реализации инициативов пространственных кластеров в рамках межмуниципальных объединений. А так же были идентифицированы зарезервированные функции межмуниципальных объединений для эффективного осуществления этих процессов.
- Было предложено стимулировать видам межмуниципальных объединений, применяя систему сетевого управления, который основан на цифровизации общей базы информации относящиеся сообществам, и на осуществлении части полномочий местного самоуправления с помощью реализации информационных и коммуникационных методов.

Диссертация состоит из введения, 3 глав, выводов, списка использованной литературы и приложений. Содержание диссертации изложено на 129 страницах, включает 8 таблиц, 5 графиков.

GHUKAS KHACHIKYAN

THE PERSPECTIVES OF THE REPUBLIC OF ARMENIAI LOCAL SELF-GOVERNMENT DEVELOPMENT THROUGH THE INTERMUNICIPAL COOPERATION

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02- "Economics, Management of the Economy and its Spheres".

The defence of the thesis will take place on May 11, 2017, at 14^{00} o'clock at 014 Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics: 128 Nalbandyan street, Yerevan 0025.

ABSTRACT

The main aim of this dissertation is the detailed examination of intermunicipal cooperation opportunities in the Republic of Armenia for the local self-government development. The following issues have been enlisted in the present work to accomplish this purpose:

- to explore the specifics of local self-government and the theoretical, methodical and legal bases of intermunicipal cooperation development,
- to analyze the international tendencies and the best experience of intermunicipal cooperation in order to find out localization possibilities in our republic,
- to implement a complete research of the premises of community enlargement and the formation of intermunicipal unions, and the present legal framework,
- to justify the necessity and opportunities of investing new management principles and mechanisms within the frames of intermunicipal cooperation in order to increase the efficiency of local government,
- to explore the opportunities of intermunicipal cooperation for local self-government bodies which are located within the administrative boundaries of different regions,
- to work out a methodology of investment and development of intermunicipal cooperation through the redistribution of local self-government authority,
- to present project approaches of implementation of cluster initiatives within the frames of intermunicipal cooperation.

The main results of the dissertation have theoretical, methodical and practical directions, the scientific novelty of which refers to the ways of increasing the efficiency of local self-government. The provisions deriving from the basic scientific

novelty, required within the frames of the research, are summed up in the following points:

- The necessity of economic development and not the optimization of costs; has been justified for investment of intermunicipal cooperation, in case of which not the community enlargement is highlighted but the formation of targeted unions that combine different powers which will lead to further community enlargement.
- A methodical approach to the assessment of cost needs of intermunicipal union has been presented which is possible to use for improving the process of granting subsidies from the state budget to local government budgets, as well as estimate the expediency of confirmation of intermunicipal cooperation.
- The importance of intermunicipal cooperation promotion has been justified by using the spatial development principles, where the regional administrative location of cooperating municipalities is not relevant and the development possibilities of cluster economies will provide a basis for the cooperation; besides, the project approaches to the development and implementation of spatial cluster initiative have been presented within the frames of intermunicipal consolidation; the functions assigned to the intermunicipal unions have been clarified for their effective implementation.
- The intermunicipal cooperation forms of using the network management system have been suggested for promotion which is based on the methods of digitalization of the whole information base concerning the municipalities and the implementation of some local self-government powers through the information and communication technologies.

The thesis is structured as follows: introduction, three chapters, concluding remarks and recommendations and bibliography. The volume of the thesis is 129 pages, including 8 tables and 5 charts.